

## ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Վաղ քրիստոնեության և ամտիկ փիլիսոփայության փոխհարբերության և փոխազդեցության հիմնահարցը գիտատեսական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Պատմականորեն քրիստոնեական աստվածաբանության ձևավորումը սերտորեն կապված է եղել ժամանակի փիլիսոփայական մտածողության հետ և նախնական շրջանում հիմնական գծերով պայմանավորվել է նրանով: Դելլենիստական փիլիսոփայության թեոսոֆիական ընթացումները, ինչպես նաև հրեական թեոսոփիան բազմաթիվ հիմնախմնդիրների շրջանակներում ուղղակի առնվել են քրիստոնեության հետ և որոշ հարցերում ազդել քրիստոնեության տեսական մտքի (աստվածաբանության) վրա, ինչն առավել խորացել և զարգացել է քրիստոնեության առաջին դարերում:

Այդ տեսանկյունից յուրաքանչյուր հերձվածողական շարժման կամ անհատ մտածողի հայացքներն արժեկորելիս առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ վերջինիս հիմքում ընկած տեսական-փիլիսոփայական և փիլիսոփայական-աստվածաբանական աշխարհայացքի վերլուծությանը, առավել ևս, որ այդ ոլորտում տեղ գտած հիմնահարցերը սերտորեն կապված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդեցությունների հետ և պայմանավորված են դրանցով: Վաղ քրիստոնեական հերձվածների աստվածաբանական ընթացումների ձևավորման գործում մեծ դերակատարություն ունեցող ազդակների թվում առանձնահատուկ տեղ է գրավում Փիլոն Ալեքսանդրացու լոգոսի վարդապետությունը:

Վերլուծաբանները համանիտ են այն հարցում, որ Փիլոնի կրոնափիլիսոփայական աշխարհայացքը ձևավորվել է ալեքսանդրիական կրոնական փիլիսոփայության՝ հելլենիստական էկլեկտիկության միջավայրում<sup>1</sup>, և հենց ալեքսանդրիական աշխարհաբաղաքացիական միջավայրը «ճանապարհ հարթեց հրեականության և հելլենիստական փիլիսոփայության համադրության համար»<sup>2</sup>: Փիլոն Ալեքսանդրացին եղել է հունական կրթություն ստացած այն հրեաներից, որը ձգտել է այլարանական մեկնաբանության մեթոդի օգնությամբ Աստվածաշնչի (Դին Կտակարանի՝ Գ. Ա.) լեզուն թարգմանել հունական փիլիսոփայության լեզվի, որով էլ ծնունդ է առել աստվածաշնչական էկզեգետիկան<sup>3</sup>:

<sup>1</sup> Տես Տրубեցկոյ Ս. Ն. Учение о Логосе в его истории: Философско-историческое исследование. М., 2000, с. 109.

<sup>2</sup> История философии (под ред. Г. Ф. Александрова и др.). Т. 1 / Философия античного и феодального общества. М., 1940, с. 389.

<sup>3</sup> Տես Մայորов Г. Г. Формирование средневековой философии. М., 1979, с. 47: Դարկ է նշել, որ այս մոտեցումը հաշվի չի առնում այն, որ հինկտակարանային տեքստերի մեկնաբանության առաջնությունն ամենակին էլ Փիլոնին չի պատկանում: Նա պարզապես եղել է հինկտակարանային տեքստերի այլարանական մեկնաբանության ջատագովներից մեկը: Այդ մասին տես Տրубեցկոյ Ս. Ն. Учение о Логосе в его истории: Философско-историческое исследование, с. 89-110:

Փիլոն Ալեքսանդրացու նկատմամբ Եկեղեցական ավանդության վերաբերունքն աչքի է ընկնում ընդգծված տարրերությամբ: Նրա տեսական ժառանգությունն ինտենսիվորեն ուսումնասիրվել է Եկեղեցական հայրերի՝ Կղեմես Ալեքսանդրացու, Եվսեբիոս Կեսարացու, Որոգիմեսի, Գրիգոր Կապաղովկիացու և այլոց կողմից: Յերոնիմոսը հիշատակում է մեծ տարածում գտած ավանդական այն ենթադրությունը, թե «Սողոմոնի իմաստության» հեղինակը եղել է Փիլոնը»<sup>4</sup>: Նրա ամունը հիշատակվում է նաև Պոլոս Սամոսատցու, Սարելի, Նեստորի և քրիստոնեական այլ հերձվածողների ու հերձվածների վրա ունեցած ազդեցության առնչությամբ: Այս տեսակետից Փիլոնի կրոնափիլիսոփայական հայացքների վերլուծությունը պետք է կարևորել այն տեսանկյունից, որ նրա «... ուսմունքը կրոնական և փիլիսոփայական մտքի վրա ունեցած իր ազդեցությամբ հսկայական հետաքրքրություն է ներկայացնում, ազդեցություն, որը հայտնի աստիճանով շարունակվում է արտահայտվել նաև մեր օրերում»<sup>5</sup>: Նրա աշխարհայցքի ծևավորման գործում բացարիկ դեր է կատարել կրոնների և քաղաքակրթությունների խաչմերուկի, հնի և նորի, արևելյան և արևմտյան ուսմունքների հարուստ շտեմարանի համարում ունեցող Ալեքսանդրիայի ինտելեկտուալ միջավայրը: Այդ ազդեցության շնորհիկ է, որ Փիլոնի ուսմունքն այսօր էլ մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ «... որպես հելլենիստական մտքի վառ դրսւորում, որպես քրիստոնեության ընդառաջ գնացող առաջին դարի մտահայեցողական շարժման կենտրանի հուշարձան»<sup>6</sup>:

Կրոնի (հուդայականության) մեկնության ոլորտում Փիլոնն առաջիններից էր, ով դիցաբանական մտածողության համապարփակ արտահայտչամիջոց համարվող այլարանական մեկնաբառնության մեթոդը կիրառեց Մովսեսի Յնգամատյանի նկատմամբ: Ընդ որում, այդ գործընթացում նրա համար ելակետային է հանդիսացել այն համոզմունքը, թե աշխարհակառույցի գաղտնիքները սրողված են պատմական շարադրանքով, և որ այն հասանելի է բացառապես աստվածային շնորհով օժտված նվիրյալներին: Կրոնական համոզմունքներով Փիլոնը եղել է հետևողական միաստվածության (հրեական ընթրոնման) և կրեացիոնիզմի հետևորդ: Անհերթելի է և այն, որ աշխարհայցքային բնույթի բազմաթիվ հարցերի մեկնաբառնության գործում նա հավասարապես օգտագործել է նաև իր ժամանակի փիլիսոփայության գիտական սկզբունքները: Փիլիսոփայական կրթությունը նրան թույլ է տվել Յնգամատյանի մարդակերպ և նատուրալիստական դրվագները մեկնաբառել խորհրդապաշտական այլարանությունների որակով: Այդ հիման վրա էլ Փիլոնի կողմից Աստվածաշունչը մեկնաբառվում է

<sup>4</sup> Այդ համատեքստում վարկածային պետք է համարել Ժ. Է. Բրունսի և Դ. Թ. Ռունիոնի վերլուծական աշխատանքներում տեղ գտած այն տեսակետները, թե իր Փիլոն Ալեքսանդրացին իր «համատառուն տեղն ունի քրիստոնեության պատմության մեջ, և որ նա եղել է «առաքյալների գրուցակիցը, հետազայում՝ սանը», «Եկեղեցու առաջին պատմիչը», «առաջին մեկնիչը» և նույնիսկ «Իմաստության գրքերի հեղինակը», տես՝ Bruns J. Edg. Philo Christianus “The Debris of a Legend // “Harvard Theological Review”, 1976, N 66, p. 141-145; Runio D. T. Philo Christian Literature: A Survey, Compendia Resum Iudaicarum ad Novum Testamentum. Sec. III, V. 3, Minneapolis, 1993, p. 3-33.

<sup>5</sup> Трубецкой С. Н. Учение о Лигосе в его истории: Философско-историческое исследование, с. 109.

<sup>6</sup> Նույն տեղում:

այութագորականության, պլատոնականության և ստոիկյան փիլիսոփայության հիմնարար ըմբռնումների դիրքերից: Տեսական կրոնագիտության տեսանկյունից ուշագրավ է նաև այն, որ Փիլոնի կողմից կիրառվող այդ մեթոդաբանության արդյունքում հինկտակարանային Աստվածը մեկնաբանվում է հելլենիստական հնչեղությամբ, ինչը բազմաթիվ տեսանկյուններով էապես մերձենում է փիլիսոփայական աշխարհայացքին:

Աշխարհակառուցի հիմնարար հարցերի մեկնության գործում Փիլոնը մեկնակետային է համարում **աստվածաբանական ապօֆատիկ մեթոդ**: Այդ մեթոդը նա ընտրում է Աստծո մասին գիտելիք ձեռք բերելու, խորհրդապաշտական եքստագ և գերբնական ինտուիցիայի հայեցակարգ ձևավորելու համար: Ընդ որում, դա կամայական հետաքրքրություն չէ: Յավատարին մնալով մտահանցողականությանը՝ այդ մոտեցմամբ նա հանգում է մի շարք աստվածաբանական եզրահանգումների<sup>7</sup>: Այլաբանական և ապօֆատիկ մեթոդներին հավասար՝ Փիլոնն Աստվածաշնչի մեկնության գործում մեծ տեղ է հատկացնում նաև իր ժամանակի փիլիսոփայական ուսմունքներում մեծ տարածում ունեցող անդրանցականության (տրանսցենդենտիզմի) սկզբունքին: Այդ դիրքերից խորհրդապաշտ աստվածաբարանը հիմնավերում է մատերիական և գգայական աշխարհի հետ հրեական ըմբռնման աստվածային եզակիության հարաբերությունները: Ընդ որում, Փիլոնն առանցքային է համարում նյութական աշխարհից դուրս և դրանից վեր կանգնած «մատերիազերծ Աստծու» անդրանցական բացարձակ էության, վերջինիս անսկիզբ ու անվերջ տարածաժամանակային որակների հիմնավորումը: Դրանով աստվածաբանությունը փիլոնյան հայեցակարգում էական հարցերում մերձենում է **Պլատոնի և այութագորականության համակարգերում շրջանառվող «անհաս Մոնադի»** ուսմունքին: Եվ չնայած դրամ Աստծուն համարելով գոյի բացարձակ պատճառ՝ Փիլոնն աստվածային էությունը որակում է որպես բացարձակ սկիզբ, որը հանդես է գալիս որպես բոլոր որակների, հատկությունների, Դայտնության օրյակումների և սուրյակումների ակունք, որն իր կամքով կատարելությամբ արարում է աշխարհը և հարաբերվում նրա հետ:

Այդ ամենի արդյունքում, ըստ Ս. Տրուբեցկոյի, «... արտաքին պատմությունն այստեղ վերածվում է բարոյական իրադարձությունների ստվերի, **հոգևոր իրավիճակների հնչող այլաբանության**: Յին Կոտակարանը դադարում է Եհովայի՝ իր ժողովրդի հետ միության հուշարձան լինելուց և վերածվում է **Պլատոնի, Զենոնի, Արիստոտելի և Պյութագորասի հետ միավորող բարձրագույն իմաստության հայտնության (ընդգծումը մերն է՝ Գ. Ա.)»<sup>8</sup>: Այստեղից տրամաբանորեն**

<sup>7</sup> Այդ տեսանկյունից միանգամայն բնորոշ է Ս. Տրուբեցկոյի այն պնդումը, թե Փիլոնը «... էկլեկտիկ է գրականության, ինչպես նաև փիլիսոփայության մեջ, որը և մտքեր և անմիջական բառեր է փոխառել կիմիկներից, ստոիկներից, Պլատոնից, Պոսիդոնիից, անգամ՝ սկեպտիկներից» (**Трубецкой С. Н.** Սченение о Лигосе в его истории: Философско-историческое исследование, с. 113): Այս հարցում գրեթե համահունչ է Գ. Այսորովի, Լ. Տիխոնմիրովի և այլ վերլուծաբանների տեսակետները (տես **Майоров Г. Г.** Формирование средневековой философии, с. 47; **Тихомиров А. А.** Религиозно-философские основы истории. М., 2004, с. 181, 183 և այլն):

<sup>8</sup> **Трубецкой С. Н.** Սченение о логосе в его истории, с. 127-128: Լ. Տիխոնմիրովը ևս գտնում է, որ «փիլոնյան ուսմունքն իր մեջ ավելի շուտ փիլիսոփայության և կրոնի հաշտեցման պահանջ է բովանդակում, քան դրանց իրական համերաշխություն», տես **Тихомиров А. А.** Религиозно-философские основы истории, с. 183:

հետևում է, որ Փիլոնի կրոնափիլիսոփայական համակարգի համար հիմք են ծառայել Պլատոնի «իդեաների» և ստոիկների «Լոգոսի» մասին ուսմունքները, որոնք սերտորեն շաղկապվել են իրեական թեոսֆիական աշխարհընկալումներին: Սակայն, ինչպես իրավամբ նկատում է Ս. Տրուբեցկոյը, Փիլոնի մեկնությունները միայն առաջին հայացքից են կամայական թվում: Իրականում դա եղել է միանգամայն համակարգված և խորապես հիմնավորված հայեցակարգ, որն «... ունեցել է իր կանոններն ու հիմնավորումները, մասսամբ իրեական ռարրիներից, մասամբ՝ հունական քերականներից փոխառնված մեթոդ, որը փոխանցվել է Աստվածաշնչի հետագա մեկնաբաններին, և որը մինչ օրս դեռևս ունի իր ազդեցությունը»<sup>9</sup>: Ելակետային այդ դիրքորոշումների հիմնան վրա էլ կառուցվում է միջնորդի փիլոնյան ուսմունքը, որի միջոցով նա բացատրում է Աստված-աշխարհ բազմաստիճան հարաբերությունները:

Փիլոնյան միջնորդ Լոգոսն իր պատճառական սկզբի՝ բացարձակ Աստծու հետ ոչ մի ընդհանրություն չունեցող աստվածային էներգիա է կամ էներգիաների գումար: Լոգոսի կրոնափիլիսոփայական այդ ուսմունքը փորձում է հիմնավորել, որ Լոգոսն Աստծու հայտնության իմաննենու՝ անդեմ ծնւն է, «արարչության և Յայտնության օրգանը», «Աստծու միջնորդ Որդին», «բարձրագույն իրեշտակը», «Աստծու առաջին և մեծագույն քահանան», «Արքայության քահանա Մելքիսեդեկը», «Աստծու և աշխարհի միջնորդը» և այլն: Այդ ամենով հանդերձ՝ Փիլոնի աստվածաբանական համակարգում Լոգոսն առավելապես բնութագրվում է որպես բացարձակ, անվերջ ու անսահմանափակ Աստծու «առաջին քահանա» և «աշխարհի քավիչ»: Եվ, այդուհանդերձ, իրականությանը բավականին մոտ պետք է համարել այն տեսակետը, որ լոգոսի փիլոնյան պատկերացումների համաձայն «... հունական փիլիսոփայությունը և աստվածաշնչյան իմաստությունը, վերջին հաշվով, ունեն նույն ակունքը՝ աստվածային բանականությունը՝ Լոգոսը, թեև աստվածաշնչյան իմաստությունն ունի այն առավելությունը, որ պարզապես Աստծու քանն (Լոգոս) է, այն դեպքում, եթե հույնների փիլիսոփայությունը հանդիսանում է Աստվածային Լոգոսի պատկերի՝ «քանն» արտացոլումը և մարդկային վերարտադրությունը»<sup>10</sup>:

Լոգոսի որակների փիլոնյան մեկնությունների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ այդ հարցում նա անառարկելիորեն կրել է պլատոնականության ազդեցությունը: Պնդելով, որ Աստված աշխարհն արարել է ըստ «իդեաների մոդելի»՝ Փիլոնը, շեղվելով պլատոնականությունից, միաժամանակ առաջադրում է այն տեսակետը, թե Լոգոսը «աստվածային մտքերին մերձեցող հավերժական իդեաների քագավորն է», հետևաբար՝ նա նախորդում է տիեզերքին:

Մյուս կողմից նա ձգտում է հիմնավորել, որ փիլիսոփայության նպատակն Աստծու ծանաչողությունն է: Բայց քանի որ փիլոնյան համակարգում գիտելիքը և հավատը մեկնաբանվում են հակադրության մեջ, այդ տրամաբանությանը էլ աստվածաբանը պնդում է, որ մտքի (գիտելիքի) կողմից գերբնականի ճանաչողությունը անհնար է: Աստծու ծանաչողության հնարավորությունն անթեղված է բացառապես Լոգոսի մեջ, քանի որ միայն նրան է վերապահված աստվածային որակների արտացոլման հնարավորությունը: Եվ քանի որ փիլոնյան

<sup>9</sup> Трубецкой С. Н. Учение о логосе в его истории, с. 128.

<sup>10</sup> Майоров Г. Г. Формирование средневековой философии, с. 48.

հայեցակարգում արարված աշխարհն այլ բան չէ, քան Արարիչ Աստծու մտքի նյութականացում, ապա արարման հոգևոր նախապատկերն առկա է աստվածային Լոգոսի մեջ:

Այս տեսակետից Լոգոսի կրոնափիլիսոփայական ըմբռնման համար Փիլոնի ուսմունքը հանդես եկավ որպես ավարտուն հայեցակարգ: Մյուս կողմից պետք է նկատել, որ Փիլոն Ալեքսանդրացու կրոնափիլիսոփայական համակարգում Լոգոսը դիտարկվում է իրու այնպիսի միջնորդ, որը «... նախասկզբնական չէ, ինչպես Աստված, ոչ էլ ծնված է, ինչպես մենք, այլ գտնվում է այդ ծայրահեղությունների միջն և համբնկում է երկուսին էլ»<sup>11</sup>: Դրա պատճառն այն է, որ մի դեպքում ստոիլյան ըմբռնման դիրքերից փիլոնյան Լոգոսը մեկնարանվում է որպես Աստծո արտագեղություն, իսկ երբեմն էլ, պլատոնականության ոգով, Լոգոսը բնութագրվում է որպես Աստծու այնպիսի ուժ, որն իրենով պայմանավորում է «համաշխարհային կարգ ու կանոնը»: Եվ չնայած այդ որոշակի անհամաձայնություններին՝ անուրամալի է նաև Լոգոսի փիլոնյան ուսմունքի կրոնափիլիսոփայական նորույթը: Նրա հայեցակարգում հինգտակարանային վարդապետությունն առաջին անգամ մեկնաբանվում է բանականության (տեսական մտքի) և տրամաբանական մտածողության դիրքերից:

Այդ ամենը փաստում է, որ Փիլոնի կողմից առաջադրված հայեցակարգային լուծումները բազմաթիվ տեսանկյուններով հիշեցնում են արտագեղման պլատոնական ուսմունքը, այն է՝ Լոգոսը ծառագում և բխում է անպատճառական նախասկզբ Աստծուց: Անվերջի և Վերջավորի փիլիսոփայական ըմբռնման դիրքերից աստվածաբանը պնդում է, թե Աստված գործում է ինչպես անփոփոխ ու անսպառ լույսը: Ընդ որում, նրա համար առաջնային և կենտրոնական սկզբունքը հրեական աստվածքրնողությունն է, Աստծո կողմից աշխարհի արարչագործության հուդայական պատկերացումը: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ պետք է համարել այն, որ Փիլոնի համար սկզբունքորեն պետք է անընդունելի լիներ աշխարհի անսկիզբ և անվերջ գոյության մասին Արիստոտելի ուսմունքը: Եվ, չնայած ստորադասության այդ ըմբռնմանը, Փիլոնը ձգտել է հաշտեցնել, նույնիսկ կարելի է ասել, ներդաշնակեցնել աշխարհայացքային համապարփակ հիմնահարցերի կրոնական և փիլիսոփայական լուծումները:

Այդ եզրակացությունը կարելի է փաստել Փիլոնի այն պնդմանը, որ Յին Կտակարանը և հունական փիլիսոփայությունը մինյանց չեն հակասում, քանի որ երկուսն էլ Լոգոսի ծնունդ են: Յին Կտակարանում աստվածային Լոգոսն իրեն բացահայտում է մարգարեններով, իսկ փիլիսոփայության մեջ հանդես է գալիս որպես Լոգոս, որը դրսենորվում է և մարդկային բանականության մեջ, և մատերիական աշխարհում: Ահա թե ինչու աստվածաբանը պնդում է. «Սովորեսի, Պյութագորասի և Պլատոնի հմաստությունն ունի միևնույն ակունքը: Աստվածայինի մասին այդ ակունքից են իրենց բազմազան պատկերացումները քաղում նաև բոլոր ժողովուրդները: Այդ պատկերացումների (Աստծու մասին՝ Գ. Ս.) անհամապատասխանությունը պայմանավորված է միայն նրանց (ժողովուրդների՝ Գ. Ս.) գիտակցության մեջ Լոգոսի ուժի ոչ ամբողջական դրսենորումներով»<sup>12</sup>:

<sup>11</sup> Ранович А. Б. О раннем христианстве. М., 1959, с. 264.

<sup>12</sup> Майоров Г. Г. Формирование средневековой философии, с. 52.

Լոգոսը համարելով «Աստծո առաջնեկ»՝ Փիլոնը նրան բնութագրում է «Աստծո մարդ», «երկնային Աղամ», «մանանա», «հրեշտակ» և հինկտակարանային այլ որակներով: Բնագրային վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ նշված բոլոր որակները Փիլոնն օգտագործում է նկարագրական իմաստով՝ Լոգոսի հատկանիշները բնութագրությունը համար: Ինչ վերաբերում է **Լոգոսի հիմնական հատկանիշին**, ապա, աստվածաբանը հանովված է, որ դա պետք է սահմանել որպես Աստծոն և աշխարհի միջև միջնորդ:

Լոգոսի մասին Փիլոնի կրոնափիլիսոփայական ուսմունքը որոշակի ազդեցություն է ունեցել նաև քրիստոնեության աստվածաբանական մտքի վրա: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ այս հարցում արմատական վերանայման կարիք ունեն կրոնագիտական որոշ կարծրատիպեր: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Տյուրինգենյան պատմական դպրոցի ջանքերով ձևավորված և գերմանական լիբերալ աստվածաբանության տարրեր դպրոցներում և փիլիսոփայական համակարգերում շրջանառվող այն տեսակետին, թե վաղ Զատագովների կողմից Աստված Բանի դոգմատիկական ուսմունքը ձևավորել է փիլոնյան հայեցակարգի ազդեցությամբ, որի պատճառով ել Փիլոնը որակվում է «քրիստոնեության հայր»<sup>13</sup>:

Քրիստոնեության վրա փիլոնյան հայեցակարգի ազդեցության փաստն անառարկելի են համարում նաև XIX-XX դարերի բազմաթիվ վերլուծաբաններ<sup>14</sup>: Պատճառը հավանաբար այն է, որ Փիլոնը եղել է քրիստոնեության ժամանակակիցը և նրա ուսմունքը դիտարկվել է որպես Լոգոսի քրիստոնեական վարդապետության «նախապատրաստության» կամ «անցնան» փուլ<sup>15</sup>: Այդպիսին է, օրինակ, ոտս եկեղեցագետ և աստվածաբան Ա. Սպասկու տեսակետը, ըստ որի՝ «Փիլոնից փոխառած Լոգոսի գաղափարը ջատագովներն ինքնուրույն զարգացրեցին քրիստոնեության ոգով: Նրանք Լոգոսը վերածեցին քրիստոնեական կրոնի առանցքի և այդ մեկնակետից լուսաբանեցին ոչ միայն զուտ կրոնական, այլև

<sup>13</sup> Մասնավորապես Երիտիեգելական Բրունո Բաուերը XIX դարի 50-ական թվականներին քրիստոնեության դավանաբանության ձևավորման գործում առանձնահատուկ տեղ հատկացնելով Փիլոն Ալեքսանդրացու Լոգոսի տեսությանը, նրան անվանում է «քրիստոնեության հայր»: Այդ տեսակետն ավելի ուշ կրկնում են Ֆ. Էնգելսը և նրա հետևողամբ՝ մարքսիստ կրոնագետները:

<sup>14</sup> L. Տիխոնմիրովը պնդում է, որ քրիստոնեության վրա Փիլոնին ազդեցություն է վերագրվել երկու ուղղությամբ՝ իր նա և քրիստոնյա աստվածաբաններին սովորեցրել իր եկցեգետիկայի, այսինքն՝ Աստվածաշնչի իմաստի այլաբանական մեկնության հետ, և որ նա և իր ազդել Լոգոսի (այսինքն՝ Որդի Աստծու) քրիստոնեական ըմբռնման վրա, տե՛ս **Тихомиров Л. А.** Религиозно-философские основы истории, с. 184:

<sup>15</sup> Այդ մասին տե՛ս **Муретов М.** Философия Филона Александрийского в отношении к учению Иоанна Богослова о Логосе. М., 1885, с. 7; **Тихомиров Л. А.** Религиозно-философские основы истории, с. 177 և այլն: L. Տիխոնմիրովը Փիլոնին ոչ միայն համարում է «կոմպիյատոր» և իմքնուրունությունից գործ հեղինակ, այլև գոտնում է, որ վերլուծաբաններից շատերը բացարձակ անհիմն կերպով նրան համարում են «քրիստոնեության դավանաբանության վրա ազդեցություն գործած հեղինակ», այդ մոտեցնան մանրամասները տե՛ս **Тихомиров Л. А.** Религиозно-философские основы истории, с. 183-184.

պատմամշակութային հիմնահարցերը»<sup>16</sup>: Սակայն դա ամենին էլ չպետք է հասկանալ այն իմաստով, թե իբր քրիստոնյաների նվիրական Լոգոսը պետք է ընկալել իբրև խորհրդավոր ուժ, որը ծագել է էլ ավելի խորհրդավոր ու անձանաչելի Աստծուց<sup>17</sup>: Փաստն այն է, որ եթե Փիլոնի նպատակը եղել է հրեական դավանաբանական սկզբունքների անտիկ փիլիսոփայության միջոցներով «արդարացնումը» և հիմնավորումը, ապա քրիստոնեական քատագովության համար Լոգոսի վարդապետությունը միանգանայն այլ մեկնաբանություն ունի: ճիշտ կլինի ասել՝ ի հակառակություն հրեական հավատի և փիլիսոփայական Լոգոսի փիլոնյան համադրության՝ քրիստոնեական Լոգոսի (Աստված Բանի) ուսմունքի առանցքը և կենտրոնական սկզբունքը անձնավորման և փրկագործական առաքելության մասին վարդապետությունն է, որի աստվածաբանական հիմնավորումը հանդիսանում է Յովիանու (Լոգոսի) Ավետարանը:

Այդ տեսանկյունից վերապահումով պետք է նոտենալ նաև այն տեսակետին, թե «հունական փիլիսոփայությունից փոխառելով Լոգոսի հասկացությունը՝ ավետարանիչը (Յովիաննեսը՝ Գ. Ա.) քրիստոնեության համար մեծ ծեռքբերում, իսկ հելլենիստական մտքի համար՝ կարևոր գիծում արեց՝ նրան հնարավորություն ընձեռնելով շարժվել դեպի կրոնական միաստվածություն»<sup>18</sup>: Բանն այն է, որ չնայած արտաքին ընդհանրություններին, քրիստոնեական աստվածաբանությունը «Լոգոս» հասկացությամբ ոչ միայն հստակորեն նախանշում է **հավատքային դաշտի սահմանները**, այլև յուրատիպ պատասխան է տալիս տիեզերաբանական իհմնարար՝ մատերիայի և Աստծո փոխհարաբերության հիմնահարցին: ճիշտ է, Լոգոսի քրիստոնեական ըմբռնման շնորհիվ «կրոն», «տիեզերք», «մարդ» և աստվածաբանական այլ հասկացությունները ռացիոնալ բովանդակություն և տրամաբանական բացատրություն են ստանում, սակայն դրանք բոլորը ծառայեցվում են բացառապես հավատի հիմնավորման գործին:

Այդ համատեքստում փաստական իհմնավորում չունի նաև այն տեսակետը, թե «հունական փիլիսոփայության ազդեցության շնորհիվ է վաղ քրիստոնեության մեջ հաստատվել այն միտքը, թե ծշմարիտ կրոնն անհնար է առանց այնպիսի ուսմունքի, որն իր մեջ ընդգրկում է ողջ գիտելիքը»<sup>19</sup>: Անշուշտ, հնարավոր չէ մերկապարանոց մերժել Լոգոսի փիլիսոփայական ուսմունքների ազդեցությունը քրիստոնեական աշխարհայացքի և, հատկապես, աստվածաբանության վրա: Սակայն դա չպետք է դիտարկել նաև իբրև միազիծ ազդեցություն, կամ էլ՝ պարզ փոխառություն նախ այն պատճառով, որ անտիկ դիալեկտիկական մտքի շարժումը («առասպելի՝ Լոգոսի» շարժում) Լոգոսը ներկայացնում է իբրև խոսքի և մտքի անբաժան միասնություն<sup>20</sup> այն դեպքում, եթե քրիստոնեության համար Լո-

<sup>16</sup> Спасский А. История доктринальных движений в эпоху Вселенских Соборов (В связи с философскими учениями того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице). Сергиев Посад, 1914, с. 7.

<sup>17</sup> Оргиш В. П. Античная философия и происхождение христианства. Минск, 1986, с. 145.

<sup>18</sup> Свенцицкая И. С. Тайные писания первых христиан. М., 1980, с. 121.

<sup>19</sup> Оргиш В. П. Античная философия и происхождение христианства, с. 146.

<sup>20</sup> Богомолов А. С. Диалектический логос: Становление античной диалектики. М., 1982, с. 28-29.

գոսը Որդի Աստված է, Աստծու Միածին և Էակից Որդի՝ կատարյալ Աստված՝ աստվածությամբ և կատարյալ մարդ՝ մարդեղությամբ: Եվ երկրորդ՝ ինչպես փիլիսոփայական Լոգոսի, այնպես էլ Լոգոսի կրոնափիլիսոփայական (հուդայական) ըմբռնումների համար բնութագրական է «գիտական գիտելիքների տարրերի» առկայությունը<sup>21</sup>: Այնինչ՝ քրիստոնեական Լոգոսը համարվում է Աստծու հմաստությունը և Միտքը, որով «բարբառվում է հավիտենական ու անանց աստվածային ծշմարտությունը»՝ Դայտնությունը:

Փիլոնյան հայեցակարգը շարունակեց Յին Կտակարանի աստվածաբանական մեկնարանության անտիկ ավանդությունները, և այդ համատեքստում անառարկելի է այն, որ այդ մեկնարանություններն ել ընկան էրիոնիզմի, այսինքն քրիստոնեությանն արմատապես ընդդիմադիր հակաերրորդաբանական հոսանքի աստվածաբանական մոտեցումների հիմքում: Դա է նաև պատճառը, որ ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում հակաերրորդաբանական հոսանքներն ու ուղղությունները «հիմնավորում» և առաջնային են համարում Քրիստոսի «անլիարժեք աստվածության», «որդեգրականության» կամ ժամանակային սկիզբ (արարված) լինելու տեսակետները, ինչը հանգեցրել է աստվածաբանական անհաշտ վիճարբանությունների: Պատճառներից է նաև այն, որ եթե փիլոնյան հայեցակարգում լոգոսը բնութագրվում է որպես «իմացության և գիտելիքի կատարյալ ներդաշնակություն», հավասարապես նաև հավատի և գիտելիքի համադրություն, ապա քրիստոնեության համար ծշմարտություններն աստվածային ծագում ունեն և համարվում են փորձից ու գիտելիքից դուրս և վեր, ճիշտ կլինի ասել՝ գիտելիքի անդրանցական և իռացիոնալ նախադուռ: Ու թեև Փիլոնը և Կղեմես Ալեքսանդրացին կրոնի համակարգ «փիլիսոփայություն ներմուծելու» միակ միջոց էին համարում Աստվածանիշ այլաբանական մեկնարանությունը, սակայն նրանց մոտեցումներում առկա են սկզբունքային տարբերություններ: Փիլոնի համար Աստված բարձր է Լոգոսից: Իսկ քրիստոնեական վարդապետության համար «Լոգոսն Աստծո Որդին է, հմաստությունը, ծշմարտությունը, գաղափարը, Աստծո միտքը: Լոգոսի միջոցով է Աստված արարել աշխարհը և կառավարում է այն»<sup>22</sup>:

Յիմնահարցի լուծման գործում պետք է անհրաժեշտաբար հաշվի առնել նաև այն, որ միաստվածության ըմբռնումը տեսականորեն հիմնավորվել է հունական դասական փիլիսոփայության շրջանակներում: Պետք է ենթադրել, որ միաստվածության աստվածաբանական հիմնավորումների որոնման ճանապարհին քրիստոնեությունը չեղ կարող անտարբեր վերաբերվել այդ փաստին և ինչպես որ քրիստոնեական վարդապետության առանցքը կազմող Աստված Լոգոսի ուսմունքը նորովի մեկնարաննեց Լոգոսի աստվածաբանությունը և այն հակառեց փիլոնյան հայեցակարգին, այնպես էլ նույն վերաբերմունքը դրսևորվեց միաստվածության անտիկ փիլիսոփայական ըմբռնումների նկատմաբ: Ահա այդ մոտեցմամբ էլ քրիստոնեական աստվածաբանության կողմից միաստվածությունը ոչ միայն որակապես նոր մեկնություն ստացավ (Ս. Երրորդություն), այլև արմատապես հակառակ միաստվածության հուդայական ըմբռնմանը:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>22</sup> История философии (под ред. Г. Ф. Александрова), Т. 1, с. 389.

Կրոնափիլիսոփայական այս հիմնահարցերի շուրջ ծավալված բանավեճերը պայմանավորեցին II-III դարերի հակաերրորդաբանական հոսանքների առանձնահատկությունները: Ուստի պետք է ընդունել, որ քրիստոնեության շրջանակ-ներում ձևավորված հակաերրորդաբանությունը մեկուսի և փակ երևույթ չէր: Ավելին, ինչպես փաստերն են վկայում, հակաերրորդաբանությունը բխեցրել և բխեցնում է Լոգոսի փիլոնյան ուսմունքից (կամ խարսխում է այդ ուսմունքի վրա), որով էլ ուղղակի հակադրվում է Եկեղեցական (ավանդական կամ ուղղաղապահ) երրորդաբանական ուսմունքին: Այդ կտրվածքով պետք է դիտարկել նաև II-III դարերի հակաերրորդաբանական հոսանքների վարդապետական առանձնահատկությունները, քանի որ դրանցում քրիստոնեական երրորդության համագոյ երկրորդ դեմքի՝ Յիսուս Քրիստոսի (Աստված Լոգոս) մասին զարգացվում են Եկեղեցական ուսմունքին տրամագծորեն հակադիր բանական և խորհրդապաշտական մոտեցումները: Այդ ամենն էլ թույլ է տալիս պնդել, որ առաջին դարերի հակաերրորդաբանությունը ոչ միայն հենքած էր հրեական միհաստվածության և Լոգոսի փիլոնյան ընթացքումների վրա, այլև՝ ուղղակի վերարտադրում է դրանց հիմնադրույթները:

Լոգոսի փիլոնյան ուսմունքի հետ I-III դարերի հակաերրորդաբանական ուսմունքների ուղղակի և միջնորդավորված կապի վերլուծությունը բավարար հիմք է տալիս եզրակացնելու, որ հավատքային հարցերում քրիստոնեության վրա Փիլոնի հայեցակարգն ուղղակի ազդեցություն է ունեցել ոչ թե դրական (Որդի Աստծու կամ Աստված Բանի ուսմունքի վրա ունեցած ազդեցության), այլ բացասական առումով, քանի որ հիմք է դարձել հավատքային պառակտումների համար: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ է այն, որ անգամ IV դարուն արիոսական հակաերրորդաբանության հակառակորդները, իբրև հերձվածող այդ ուսմունքի հոգեր ակունք, շատ անգամ մատնանշել են նաև Փիլոնին: Մեծ թիվ են կազմում նաև այն վերլուծաբանները, որոնք փիլոնյան տրամախոհական կառույցից են բխեցնում ինչպես Սաբելի (մոդալիստական հակաերրորդաբանության), այնպես էլ Պողոս Սամոսատցու (դինամիստական հակաերրորդաբանության) համակարգերը<sup>23</sup>: Իսկ այդ ամենն աներկրա վկայում է, որ Փիլոն Ալեքսանդրացին եղել է հուդայականության հետևողական ներկայացուցիչ, հետևաբար՝ ընդգծված հակաերրորդաբան, և ոչ միայն: Նրա համակարգում երրորդաբանական հարցեր առհասարակ չեն քննարկվել և չեն կարող քննարկվել: Ավելի ճիշտ կլինի ասել՝ փիլոնյան էկլեկտիկ հայեցակարգում քննարկվել և հիմնավորվել են միայն հուդայական աստվածաբանության հիմնահարցերը, որոնք իրենց էությամբ և ուղղվածությամբ ընդգծված հակաերրորդաբանական երանգավորում ունեն:

<sup>23</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, **Վարձարայն Օ. Ս.** Ֆիլոն Ալեքսանդրիական արքայի պատմությունը՝ միհանավորված չեն նաև Յ. Ուղիփոնի տեսակետը, տե՛ս **Wolfson H. A.** The Phylosoph of the Church Fathers. Faith, Trinity, Incarnation. V. I, Cambridge, 1964, p. 578-585. Սակայն լիովին հիմնավորված պետք է համարել վերլուծաբանի պնդումն այն մասին, որ Լոգոսի փիլոնյան ուսմունքի և Արիոսի «ստորադասության» միջև առկա է «ամժամանակային» տրամաբանական կապ, տե՛ս նույն տեղում, էջ 585-587:

Այսպիսով, Երրորդաբանական աստվածաբանության, այդ ոլորտի ցանկացած դոգմայի զարգացման տարբեր փուլերի, դրանց վերագրվող ազդեցությունների և դրանց շուրջ ծավալված վիճաբանությունների քննական ուսումնասիրությունը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել քրիստոնեության հավատքային համակարգում Լոգոսի ըմբռնման շուրջ ավանդական եկեղեցական և հրեաքրիստոնեական հերձվածողական (Եբինիտներ, գնոստիկներ, միապետականներ) ուղղությունների միջև պայքարի դինամիկայի մասին: Այդ մոտեցումն էապես նպաստում է նաև I-III դարերի ներեկեղեցական կյանքի իրողությունների արժևորմանը և եկեղեցում հավատքային տարբեր կոնֆլիքտացիաների էության բովանդակային հարցերի ուսումնասիրության գործին:

## К ВОПРОСУ О ВЗАИМООТНОШЕНИЯХ ФИЛОНА АЛЕКСАНДРИЙСКОГО И ХРИСТИАНСТВА

*Г. А. САРКИСЯН*

Основой богословия Филона Александрийского является единобожие в иудейском понимании. И поэтому учение Филона о Логосе (посреднике) диаметрально противоположно тридологической концепции христианства.

Именно в этом контексте надо считать гипотетическим утверждение о том, будто христианские апологеты II-III вв. разрабатывали учение о Боге Сыне под воздействием богословия Филона. Апологетические учения о Логосе основываются на принципе субординализма, что во многом напоминает учение стоицизма.

## ON RELATIONSHIP OF PHILO OF ALEXANDRIA AND CHRISTIANITY

*G. A. SARGSYAN*

The basis for the theology of Philo of Alexandria is the Jewish Monotheism. Referring to the Polo's comprehension on Logos it should be said that his ideas were not appropriate with the confession on Christian Trinity. In this context the influence of Polo's theology on early Fathers in working out their theories on Logos is not founded. The subordination doctrine on Trinity was the basis for the early teachings on Logos which reminded the Stoic doctrine of Logos.